ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ԱՇՈՏԻ ՍԱՀԱԿՅԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԽՈՇՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ (ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը.00.02.«Տնտեսության, դրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2015

Ատենախոսության թեման հաստատված է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Ծովինար Ջիվանի Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վարդան Բաբկենի Բոստանջյան,
տնտեսագիտության թեկնածու
Քրիստինե Աղասու Անտոնյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ՀԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2015թ, մարտի 13-ին, ժամը 15:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0009, ք. Երևան, Աբովյան 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. փետրվարի 12-ին:

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ.Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հասարակական և տնտեսական զարգացման ընթացքում տեղի ունեցած կերպափոխումները իրենց որոշակի ազդեցությունն ունեցան քաղաքային բնակավայրերի կենսագործունեության վրա՝ ստեղծելով բազմատեսակ տնտեսական, սոցիալական, գիտական, բնապահպանական և կառավարչական հիմնախնդիրներ: Ներկայումս տեղի ունեցող տարբեր գործընթացների ուսումնասիրությունն ու վերլուծությունը ցույց են տալիս, որ հասարակական, տնտեսական հարաբերություններում տեղի ունեցող արմատական փոփոխություններն առավելապես ցայտուն են և կենտրոնացած են խոշոր քաղաքներում: Քաղաքային տնտեսություններում հետևողականորեն խորանում են հասարակական-քաղաքական և տնտեսական-սոցիալական հիմնախնդիրները, անշեղորեն մեծանում է գործարար և ֆինանսական շրջանակների դերն ու նշանակությունը, արմատապես փոխվում են կառավարման, կարգավորման, ծրագրավորման ձևերը, մեթոդները և օբյեկտները, առավել ցայտուն են արտահայտվում տարածքային զարգացման անհամաչափությունները:

ՀՀ տնտեսական, քաղաքական, սոցիալական զարգացման մեջ մայրաքաղաք Երևանն առանձնահատուկ տեղ ունի: Այն ֆինանսական և գործարար ակտիվության կենտրոնն է, որն ապահովում է երկրում առկա աշխատատեղերի զգալի մասը: Միաժամանակ, Երևանը հասարակական ակտիվության կենտրոն է և առավելագույն ռեսուրսներ ու հնարավորություններ ունի սոցիալական կենսագործունեության համար: Երևանի քաղաքային տնտեսության զարգացումը և դրանում առկա մարտահրավերները բնութագրական են ՀՀ ամբողջ տնտեսական ու սոցիալական կյանքի համար: Միաժամանակ Երևանի զարգացումն իր ազդեցությունը առավելագույնս է թողնում երկրի սպառողական պահանջարկի և առաջարկի, աշխատանքային, ֆինանսական հոսքերի ձևավորման վրա: Ընդհանուր առմամբ, քաղաքային տնտեսությունն իրենից ներկայացնում է բավականաչափ բարդ համակարգ, որի ուսումնասիրությունը ենթադրում է գիտականորեն հիմնավորված տարբեր մեթոդների և մոտեցումների կիրառում:

Երևանի քաղաքային տնտեսությունն իրենից ներկայացնում է սոցիալ-տնտեսական հարաբերությունների մի ամբողջական համալիր ,որը բարենպաստ պայմաններ է ստեղծում բնակչության կենսագործունեության ապահովման համար և ուղղված է քաղաքացիների կյանքի որակի բարձրացմանը: Կարևոր նշանակություն է ստանում Երևանի, որպես խոշոր քաղաքային համայնքի տնտեսության զարգացման կարգավորման հիմնախնդիրների ուսումնասիրությունը: Այս առումով, կարևոր նշանակություն ունեն քաղաքային իշխանությունների գործառույթների ու գործունեության շրջանակների վերլուծության խնդիրները: Երևանի քաղաքային տնտեսության կառավարումը տեղական իշխանության կարևոր գործառույթներից մեկն է, որի հիմնական խնդիրը սոցիալ-տնտեսական գործընթացների կանոնակարգման, հավասարակշռված զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորման, բնակչության բնականոն գործունեության ապահովման, ինչպես նաև քաղաքի կենսագործունեության համար անհրաժեշտ այլ խնդիրների լուծման մեջ է: Այս առումով կարևոր դերակատարություն ունեն նաև քաղաքային իշխանությունները, քանի որ դրանց տարածքում գործում և զարգանում են ազգային տնտեսության սոցիալ-տնտեսական ենթահամակարգերը, որոնք հիմնականում կողմնորոշված են դեպի ներքին շուկան և դրանով իսկ ապահովում են տվյալ տարածքի բնակչության կարիքների և պահանջմունքների բավարարումը:

Հիմնականում Երևանում են կենտրոնացված ինստիտուցիոնալ և սոցիալական ենթակառուցվածները, որոնք, անշուշտ, բնակչության սոցիալ-մշակութային պահանջմունքների բավարարման և քաղաքացիական հասարակության ձևավորման համար կարևոր հիմք են հանդիսանում:

2008թ. դեկտեմբերի 26-ին ընդունված ՀՀ օրենքը Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ամբողջովին փոխեց Երևանի կարգավիճակը՝ 12 առանձին համայնքներ կենտրոնացան մեկ համայնքի՝ Երևան համայնքի մեջ: Սա նոր մոտեցում էր և թերևս առաջին փորձը Հայաստանի նորանկախ Հանրապետությունում համայքների խոշորացման շրջանակներում, ինչը բարձրացնում է կառավարման արդյունավետության մակարդակը, միասնական բյուջեի պարագայում հեշտացնում պլանավորումը և քաղաքի տեսլականի պատկերացման հաստատումից հետո դրա համար կատարվող համապատասխան միջոցառումների իրականացումը: Իհարկե, Երևանի ավագանին Երևանի տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմինն է, որը վերահսկողությունը է իրականացնում Երևանի քաղաքապետի գործունեության նկատմամբ, ով , ի դեպ, ևս համարվում է այն նույն ավագանու անդամ, սակայն Երևանի քաղաքապետի դերակատարումը կառավարման գործընթացում բացառիկ է: Նա տեղական ինքնակառավարման մարմին է, ներկայացնում է Երևանը՝ որպես համայնք, ավագանին և քաղաքապետարանը այլ անձանց և մարմինների հետ հարաբերություններում. ղեկավարում է քաղաքապետարանի աշխատանքները:

Կարևորվում է Երևանի տնտեսության առանձնահատկությունների ուսումնասիրությունը, զարգացման գերակայությունների և ուղղությունների բացահայտումը, կարգավորման, ծրագրերի մշակման արդյունավետ ձևերի ներկայացումը:

Նշված հարցերի ուսումնասիրության կարևորությամբ և անհրաժեշտությամբ է պայմանավորված այս հետազոտության արդիականությունն ու հրատապությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Աշխատանքի հիմնական նպատակը շուկայական հարաբերությունների պայմաններում Երևանի, որպես խոշոր քաղաքային համայնքի տնտեսության զարգացման հիմնախնդիրների բացահայտմանը և դրանց լուծմանն ուղղված հնարավորությունների և առաջարկությունների մշակումն է: Այդ նպատակով աշխատանքում դրվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել խոշոր քաղաքային տնտեսության էությունը, առանձնահատկությունները և ցույց տալ դրա դերը բնակչության կենսապայմանների բարելավման գործում
- հետազոտել Երևանի քաղաքային տնտեսության կառուցվածքը, բացահայտել դրա առանձին տարրերի փոխկապվածության խնդիրները
- ուսումնասիրել քաղաքային տնտեսության զարգացման ենթակառուցվածքային ապահովվածության խնդիրները, և դրանց լուծման ուղղությունները , կարևորությունը
- ուսումնասիրել Երևանի քաղաքային տնտեսության կարգավորման անհրաժեշտությունը, զարգացման միտումները, դրանց դրսևորման եղանակները
- հետազոտել Երևանի քաղաքային տնտեսության կարգավորման եղանակները, զարգացման ծրագրերի մշակման առանձնահատկությունները, դրույթները,
- ուսումնասիրել Երևանի առանձին վարչական շրջանների զարգացման անհամաչափությունները, բացահայտել դրանց նվազեցման հնարավորությունները

- ուսումնասիրել Երևանի տնտեսության զարգացման ռազմավարության մշակման անհրաժեշտությունը և հնարավորությունը:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության օբյեկտը Երևանի քաղաքային տնտեսությունն է, իսկ ուսումնասիրության առարկան՝ Երևանի քաղաքային տնտեսության կարգավորման և զարգացման հիմնահարցերը: *Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը:* Ատենախոսության համար տեսամեթոդական հիմք են դասական և ժամանակակից տնտեսագիտության հիմնարար դրույթները, քաղաքային տնտեսության կարգավորման տեսական և գործնական խնդիրներին, սոցիալական ակտիվ միջավայրի ձևավորման, քաղաքային տնտեսության կենսագործունեության ապահովման տարբեր հարցերին վերաբերող հայրենական և արտասահմանյան հեղինակների, տնտեսագետների, գիտնականների ուսումնասիրությունների արդյունքները, ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, իրավական այլ ակտեր: Հետազոտության համար տեղեկատվական սկզբնաղբյուր են ծառայել հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականության աղբյուրները, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տեղեկագրերը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության, Երևանի քաղաքապետարանի վիճակագրական և վերլուծական նյութերը, պարբերական գիտական հրատարակությունների և գիտական կոնֆերանսների նյութերը: Հետազոտության ընթացքում կիրառվել են համեմատական վերլուծության, համակարգային և ծրագրանպատակային ուսումնասիրության մեթոդները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Հետազոտությունների և ուսումնասիրությունների հիման վրա հեղինակի աշխատանքում առկա են հետևյալ նորույթները

- տրվել է խոշոր քաղաքային տնտեսության նոր մեկնաբանում, այն ձևակերպելով որպես բաց (դիսիպատիվ) սոցիալ-տարածքային համակարգ, սիներգետիկայի տեսությունը դիտարկելով որպես դրա զարգացման կարգավորման գիտական հիմք:
- բնութագրվել է Երևանի տնտեսության ինովացիոն միջավայրը և առաջարկվել քաղաքապետարանում գիտության և ինովացիաների բաժանմունքի ստեղծում ու հիմնավորվել տնտեսության զարգացման ծրագրերում ինովացիոն գործունեության համապատասխան ցուցանիշների ներկայացման անհրաժեշտությունը,
- հիմնավորվել է, որ ժամանակակից խոշոր քաղաքների զարգացման դինամիկան մեծապես կանխորոշում է տարածքների և ամբողջ երկրի զարգացման մակարդակը, բացահայտվել է Երևանի քաղաքային տնտեսության ռազմավարական ծրագրի մշակման անհրաժեշտությունը ու ձևակերպվել է ռազմավարական պլանի ձևավորման փուլերի հաջորդականությունը:

Երևանի քաղաքային տնտեսության զարգացման հիմնահարցերը դիտարկվել են տարածքային քաղաքականության համալիրում, որի արդյունքում մշակված մոտեցումների գործնական կիրառումը լայն հնարավորություններ կարող է ապահովել Երևանի բնականոն գործունեության և բնակչության բարեկեցության բարձրացման համար:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Ուսումնասիրության տեսական նշանակությունն այն է, որ հետազոտությունում

ամփոփված է խոշոր քաղաքային տնտեսության կարգավորման և կառավարման մեթոդաբանությունը, որը թույլ է տալիս այդ գործընթացները համակարգել, կանոնակարգել և դրանով դարձնել գործնական նշանակություն ունեցող տեսական ուղեցույց: Աշխատանքում կատարված վերլուծությունները և տեսական ընդհանրացումները կարևորում են Երևանի քաղաքային տնտեսության կարգավորման գործընթացների դերը, էությունը, առաձնահատկությունները, ուղղությունները և կարող են ունենալ տեսական և գործնական կիրառություն: Աշխատանքի գործնական նշանակությունը այն է, որ կատարված տեսական և վերլուծական ընդհանրացումները, եզրակացություններն ու առաջարկությունները կարող են օգտագործվել հանրապետությունում քաղաքային բնակավայրերի բազմաթիվ հիմնախնդիրների լուծման համար:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը և հրապարակումները: Ատենախոսությունը քննարկվել ու հավանության է արժանացել ՀՊՏՀ Մակրոէկոնոմիկայի ամբիոնում: Ատենախոսության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի գիտական հինգ հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքի ծավալը կազմում է 146 էջ: Աշխատանքում տեղ են գտել 9 աղյուսակ և 10 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, ուսումնասիրության առարկան օբյեկտը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, ներկայացվել են մեթոդական ու տեղեկատվական հիմքերը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ ***«Քաղաքային համայնքի տնտեսության կարգավորման տեսամեթոդական հիմքերը»*** գլխում ներկայացվել են խոշոր քաղաքային համայնքի տնտեսության ընդհանուր բնութագիրը և քաղաքային համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման միտումներն ու կարգավորման անհրաժեշտությունը:

Տնտեսական զարգացման ներկա փուլում տեղի ունեցող գործընթացների վերլուծությունը վկայում է այն մասին, որ հասարակական հարաբերությունների ոլորտում տեղի ունեցող արմատական փոփոխությունների կուտակումը տեղի է ունենում հենց քաղաքային բնակավայրերում՝ հատկապես խոշոր քաղաքներում: Շուկայական տնտեսությունում առաջին պլան է մղվում վարչատարածքային միավորների տարածքային ինքնուրույնության ապահովման և տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետ ներդրման գործընթացը:

Քաղաքային տնտեսության զարգացման կարգավորման ընթացքում առաջին պլան են մղվում այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝ պլանավորումը և ծրագրավորումը, ներքաղաքային համակարգերի փոխկապվածությունը, ռազմավարական զարգացման ընթացքում պետական և մասնավոր շահերի համադրման հնարավորությունները և այլն: Հետևաբար քաղաքային տնտեսության զարգացման կարգավորումը պետք է դիտարկել որպես քաղաքային տնտեսության ենթահամակարգերի վրա նպատակային ներգործության գործընթաց՝ սահմանված նպատակների ձեռքբերման համար: Կարգավորման կոնկրետ ուղղությունները, ձևերը և մասշտաբները պայմանավորված են տվյալ փուլում գոյություն ունեցող տարածքային զարգացման գերակայություններով և խնդիրներով: Քաղաքային

բնակավայրերում տնտեսական և սոցիալական հարաբերությունների կարգավորումը յուրաքանչյուր երկրի տարածքային քաղաքականության ուղղություններից մեկն է: Շուկայական հարաբերությունների հետագա խորացման, տնտեսական գործընթացների աշխուժացման, համաշխարհային տնտեսությանը ինտեգրվելու, միջտարածաշրջանային մրցակցության պայմաններում կայունության ապահովման նպատակով անհրաժեշտ է վերահմաստավորել տարածքի կայուն հեռանկարային զարգացման ապահովման հիմնախնդիրների ուսումնասիրման տեսական մոտեցումները: Համայնքների զարգացման արդի մեթոդաբանության մշակումն այսօր հանրապետությունում տնտեսագիտության կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է[1]: Ներկայումս քաղաքային տնտեսությունը առավել բարդ համակարգերից մեկն է, որովհետև այն ենթադրում է կապերի և փոխհարաբերությունների բազմատեսակություն, որոնց կարգավորման վերջնական արդյունքները առավել մոտ են այն սպառողներին՝ քաղաքի բնակչությանը: Անհրաժեշտություն է առաջանում ձևավորել խոշոր համայնքային տնտեսության զարգացման սեփական քաղաքականություն: Քաղաքի տնտեսության արդյունավետ վարումը հնարավոր է միայն դրա ճկունությունը մեծացնող կարգավորման և կառավարման նոր ձևերի, մեթոդների և սկզբունքների ուսումնասիրման, յուրացման և կիրառման շնորհիվ:

Քաղաքային տնտեսության ուսումնասիրության ընթացքում, ներկայումս կարևոր է սիներգետիկ մոտեցում ցուցաբերել, որը համարվում է ընդհանուր գիտական հիմք՝ գիտելիքների ամենատարբեր ոլորտներում: Սիներգետիկան համատեղ գործունեություն է, համագործակցության նոր գիտական ուղղություն: Այն կոչվում է նաև ինքնակարգավորման ընդհանուր տեսություն, որովհետև ուսումնասիրում է կարգուկանոնի առաջացումը քաոսից կամ տարբեր կառույցների ծագումը և զարգացումը այն համակարգերում, որոնք հեռու են հավասարակշռության վիճակից[2]:

Սիներգետիկայի ուսումնասիրության օբյեկտ են բաց (դիսիպատիվ) համակարգերը, որոնք բնութագրվում են այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են անհավասարակշռությունը և ոչ գծային լինելը: Այդ համակարգերը սկզբունքորեն նոր օբյեկտներ չեն՝ դրանք գիտությանն արդեն հայտնի բարդ, ինքնակարգավորվող համակարգեր են, որոնք հավասարակշռությունից հեռու իրավիճակներում ինքնազարգացման ընդունակություններ են ցուցաբերում, որը նշանակում է անցում ինքնակարգավորման մի տեսակից, մեկ այլ տեսակի: Ինքնազարգացման երևույթներ դիտարկվում են տարբեր ոլորտներում: Ինքնազարգացումը որոշվում է ոչ թե սկզբնական պայմաններով (պատճառային բացատրություն), այլ վերջնական իրավիճակով, որին նրանք ձգտում են (ելքային բացատրություն): Այս երևույթի գիտակցումը գիտական աշխարհընկալման մեջ հանգեցրեց հեղափոխական փոփոխությունների: Բաց լինելը ենթադրում է այդ համակարգերում մշտական փոխանակում առարկայական, էներգետիկ կամ տեղեկատվական միջավայրի հետ: Անհավասարակշռությունը ենթադրում է առարկաների, էներգետիկայի, տեղեկատվության փոխանակման փոքրածավալ գործընթացների առկայություն՝ հենց այդ նույն բաց համակարգի տարրերի միջև: Ոչ գծային բնույթը ենթադրում է գծային կախվածության բացակայություն՝ ներազդեցության ուժի և այդ ազդեցության նկատմամբ համակարգի ռեակցիայի ուժի միջև: Դա նշանակում է նաև, որ

[1] Յու. Մ. Սուվարյան, Վ.Մ.Կոպյան, Տնտեսագիտության հանրային կառավարում. Մեթոդաբանությունը և արդի հիմնախնդիրները, -Եր.:ԱՈՏ, 2003, էջ 8

[2] Тарасова Л.Г. “Градостраутельное планирование и регулирование развития крупниых городов с учетом действия процессов самоорганизации”- М.: 2010г. стр. 9

անկայունության վիճակում գտնվող համակարգի զարգացումը որոշվում է ոչ այնքան անցյալով, որքան այդ համակարգի ապագայով: Այս տեսական դրույթները լայնորեն օգտագործվում են նաև տարածքային կարգավորման մեջ: Հասարակական տնտեսական համակարգերի ինքնակազմակերպման օրինաչափությունների ընկալումը թույլ է տալիս կառավարման գործընթացը դարձնել առավել արդյունավետ:

Հասարակական տնտեսական կյանքում պլանավորումը սիներգետիկ տեսանկյունից դառնում է դրա էվոլյուցիայի արագացման միջոց՝ ապագայի մոդելավորման և բարեփոխումների շրջանակի կանխորոշման հաշվին:

Համակարգերի տեսության մեջ քաղաքը դիտարկվում է[a] որպես բարդ դիսիպատիվ սոցիալ-տարածքային համակարգ: Այդ պատճառով էլ հարց է առաջանում դրա վարքագծի ուսումնասիրության և զարգացման կարգավորման ընթացքում սիներգետիկ մոտեցման հնարավորության և արդյունավետության վերաբերյալ:

Քաղաքաբանությունը, ուսումնասիրելով քաղաքը, բազմակի անգամներ նկատել է ինքանակազմակերպման երևույթներ, որոնք չեն ընդհանրացվել, որպես մեկ միասնական խմբի երևույթներ: Անհրաժեշտ է հաշվի առնել ինքնակազմակերպման գործընթացները տարածքային պլանավորման և կարգավորման ընթացքում: Քաղաքային տնտեսության ուսումնասիրության ընթացքում տարբեր հետազոտողներ կարծում են, թե տեսության մեջ անհրաժեշտորեն կարող է ստեղծվել նոր ուղղություն՝ "ուրբոսիներգետիկա", որտեղ ուսունասիրվում է ՝քաղաքաշինական համակարգերի էվոլյուցիայի բնական և չխեղաթյուրված, կայուն և առաջադիմական, անընդհատ և համաչափելի բնույթը՝.[3] Ինքնակազմակերպման տեսությունը հնարավորություն է տալիս նկարագրել ու բացատրել քաղաքաշինական համակարգերի վարքը, կանխատեսել դրանց զարգացման հնարավոր տարբերակները, կառուցել այդ զարգացման կառավարման համապատասխան մոդել:

Ինքնակարգավորվող համակարգերը առավել ճկուն են, տեղայնացվող և այդ պատճառով էլ ավելի լայն հնարավորություններ ունեն գոյատևելու ժամանակակից արագ փոփոխվող աշխարհում[4]: Այս շեշտադրման հիման վրա կարելի է եզրակացնել, որ քաղաքային տնտեսության կարգավորումը, որը հաշվի կառնի քաղաքային համակարգի ինքնակազմակերպման ներուժը, թույլ կտա այդ ներուժն օգտագործել առավել մեծ չափով, և հենց դրանով էլ կավելանա այդ գործընթացի ներազդեցության արդյունավետությունը:

Երկրում ընթացող սոցիալ-տնտեսական բարեփոխումները կանխորոշում են քաղաքային տնտեսության կարգավորման մեթոդների և գործիքների ճշգրտման անհրաժեշտությունը:

Խոշոր քաղաքները տնտեսական սուբյեկտներ են, որոնք մրցակցում են այլ սուբյեկտների հետ իրենց տարածքում առավել արդյունավետ և առաջադիմական արտադրության, կապիտալի և գաղափարների կենտրոնացման իրավունքի համար: Ժամանակակից պայմաններում խոշոր քաղաքը սոցիալ-տնտեսական համակարգ է, որը հանդես է գալիս որպես շուկայական հարաբերությունների և գործարար կապերի

---

[3] Гапоненко А.J1. Стратегия социально-экономического развития: страна, регион, город. Учебное пособие. М.: Изд-во РАГС, 2001г. стр 224

[4] Воронин А. Г. Муниципальное хозяйствование и управление: проблемы теории и практики. — М.:Финансы и статистика, 2002г. стр. 29

հիմնական շարժիչ, ամբողջական արտադրական ներուժի յուրացման և օգտագործման հիմք, որը կարող է մոբիլիզացնել մրցակցային առավելությունները[5] :
Քաղաքի տարածքում բացի յուրաքանչյուր սուբյեկտի առանձնահատուկ շահերից ծագում են նաև հասարակական շահեր, որոնք պայմանավորված են ամբողջ քաղաքային հանրության ընդհանուր պահանջմունքներով, որոնց բավարարումը համապատասխանորեն պահանջում է որոշակի հասարակական ռեսուրսներ: Որպես սոցիալ-տնտեսական համակարգ քաղաքին հատուկ է սեփական կառուցվածքը, որ որոշում է նրա ներքին կազմը և գործունեությունը:

Տարբեր գիտնականներ որոշակի տեսանկյուններով և առանձնահատկությունների շեշտադրմամբ են բնութագրում քաղաքային տնտեսությունը: Ներկայումս «քաղաք» հասկացության տակ անհրաժեշտ է հասկանալ պատմականորեն ձևավորված, հասկարակական կենսագործունեության կազմակերպման տարածականորեն սահմանափակված ձև, որի գործունեության հիմք է քաղաքային կառույցների մեխանիզմը, որն արտահայտում է քաղաքի վարչատարածքային և սոցիալ-տնտեսական համակարգերի փոխհամագործակցության եղանակը[6] :

Տնտեսական տեսակետից, քաղաքը զարգացող, բնակեցված, սոցիալ-տնտեսական համակարգ է բնակչության որոշակի կենսաձևով, որը թույլ է տալիս կենտրոնացնել և արդյունավետորեն օգտագործել մտավոր, կառավարչական, նյութական, ֆինանսական, տեղեկատվատեխնոլոգիական, առևտրալոգիստիկ և տրանսպորտային ռեսուրսները: Այս հատկանիշների փոխկապվածության առանձնահատկությունը դառնում է քաղաքի բնապահպանական վիճակը պայմանավորող գործոն[7] :

Ժամանակակից քաղաքների զարգացման դինամիկան մեծապես կանխորոշում է առանձին տարածքների և ամբողջ երկրի զարգացման մակարդակը[8] :

Խոշոր քաղաքները ըստ էության փորձի և սխալների հսկայական լաբորատորիաներ են քաղաքաշինության և ճարտարապետության համար: Այդ լաբորատորիաներում քաղաքների նախագծման մասնագետները պետք է անընդհատ կատարելագործեն, առաջ քաշեն ու ստուգեն տեսությունները [9]:
Քաղաքային տնտեսությունը բարդ, դինամիկորեն զարգացող տարբեր ճյուղերի, ինչպես նաև քաղաքի տարածքում տեղակայված տարբեր կազմակերպությունների և հիմնարկների համալիր է, որոնք ամուր կապված են միմյանց հետ և միավորված են բնակչության կենսականորեն անհրաժեշտ պահանջմունքների բավարարման ընդհանուր նպատակով:
Տնտեսական սուբյեկտների բնականոն գործունեության համար քաղաքային ենթակառուցվածները ստեղծում են անհրաժեշտ ընդհանուր պայմաններ: Ենթակառուցվածները հնարավորություն են տալիս տեղական ռեսուրսներին ակտիվորեն համագործակցել և վերականգնվել է միասնական համայնքային միավորում: Այդ պատճառով էլ քաղաքներում ենթակառուցվածները ոչ միայն

---

[5] Василенко И.А. Государственное и муниципальное управление. М.: 2005. стр. 27
[6] Морозова Т.Г., Иванова Н.В., Комов В.Э., Сорокина Т.Ф., Тупчиенко В.А. “Городское хозяйство: Учебное пособие.- М.: ИНФРА-М, 2010 - 361с, стр. 13
[7] Управление в городском хозяйстве: уч. пособ./ кол.авторов; под ред. Р.Ж. Сираждинова, - М.: КНОРУС, 2009. - 352 с. Стр 7
[8] Иван Тошич “Стратегическое планирование в городах Европы, Метрополитен Рисерч Институт, Подготовело для Фонда “Институт экономики города”, Москва 2003 г., 47с., 6 стр
[9]Джекобс Джейн, “Смерть и жизнь больших американских городов /пер. с англ./ М.: Новое издательство, 2011.-460с.-/Библиотека свободы/., стр. 23

ենթադրվում են, այլև դրանց կատարելագործումը անհրաժեշտ պայման է այդ ռեսուրսների պահպանման և բազմապատկման համար:

Ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում, մեր կողմից ներկայացվել է խոշոր քաղաքային տնտեսության հետևյալ ձևակերպումը: Խոշոր քաղաքային տնտեսությունը բաց (դիսիպատիվ) սոցիալ-տարածքային համակարգ է, որի զարգացման կարգավորման ընթացքում անհրաժեշտ է սիներգետիկ մոտեցում ցուցաբերել, ինչի արդյունքում ապագայի մոդելավորման և բարեփոխումների շրջանակի կանխորոշման հաշվին պլանավորումը դառնում է դրա էվոլյուցիայի արագացման միջոց և հաշվի է առնում քաղաքային համակարգի ինքնակազմակերպման ներուժը, թույլ տալիս այդ ներուժն օգտագործել առավել մեծ չափով, և հենց դրանով էլ մեծացնում այդ գործընթացի ներազդեցության արդյունավետությունը: Խոշոր քաղաքային տնտեսության ինքնակազմակերպման օրինաչափությունների ընկալումը թույլ է տալիս կառավարման և կարգավորման գործընթացը դարձնել առավել արդյունավետ:

21-րդ դարի սկզբում ձևավորվում է տնտեսական հարաբերությունների նոր համակարգ, որը համապատասխանում է համաշխարհային տնտեսության զարգացման հետինդուստրիալ էտապին: Այս պայմաններում որոշիչ է դառնում կապիտալի ինովացիոն բնույթը, որը հենվում է գիտելիքահենք տնտեսության վրա: Ինովացիոն համակարգերի զարգացումը, դրանց համապատասխանությունը ժամանակակից պայմաններին ապահովում է ազգային հարստության հավելաճը՝ ինովացիաների շնորհիվ:

Ինովացիաներն ածանցյալ են՝ տնտեսվարող սուբյեկտների, սոցիալական խմբերի, մարդկանց միջև մրցակցության ուժի և սրության: Երբեմն ինովացիաները հայտնվում են նրանց մոտ, ովքեր չունեն բավականաչափ ուժ և ռեսուրս, որ պաշտպանեն դրանք և տանեն զանգվածային արտադրության:

Այդ պատճառով անհրաժեշտ է դրանց զարգացման նախնական փուլերում ստեղծել բարենպաստ՝ ‘ջերմոցային’ միջավայր այդպիսի մշակումների համար: Այդպիսի միջավայրի ձևավորման գործիքներ են՝ հարկային արտոնությունները, երկար և էժան փոխառությունները, դրամաշնորհները, բիզնես ինկուբատորները և անվճար կամ էժան ենթակառուցվածքով տեխնոպարկերը, ուսումնական ծրագրերը և տեղեկատվական աջակցությունը: Անհրաժեշտ է ստեղծել անընդհատ ‘հոսքագիծ’, որը կապահովի ինովացիոն մշակումների կայացում յուրաքանչյուր փուլում՝ դրամշնորհները՝ սկսնակներին, արտոնյալ փոխառությունները՝ շուկա դուրս եկողներին, երկարաժամկետ վարկերը՝ զարգացող ընկերություններին:

Ինովացիաները գործարար ակտիվության յուրօրինակ ցուցանիշ են:

Ներկայումս բացակայում է ամբողջական պատկերացում տարածքային ինովացիոն կենտրոնների ձևավորման, գործունեության կառուցվածքի, սկզբունքների, գործառույթների վերաբերյալ, որոնք անհրաժեշտորեն կարող են իրականացնել ինստիտուցիոնալ փոփոխություններ՝ ժամանակակից ինովացիոն ենթակառուցվածքի զարգացման նպատակով [10]:

Այս հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ է մշակել գիտամեթոդական հիմքեր և գործնական քայլեր կատարել տարածքային ինովացիոն համակարգերի ինստիտուցիոնալ մեխանիզմների ստեղծման և կատարելագործման ուղղությամբ՝ հետևելով տարածքի ինովացիոն ներուժի գնահատման և

[10] Садков В. Г., Машегов П.Н. “Национальная инновационная система и ее регулирование компоненты// региональная экономика: теория и практика, 2008.-N23(80) стр. 19

ժամանակակից տարածքային ինովացիոն համակարգի ունիվերսալ կառուցվածքային մոդելի մշակման վրա:

Նախ և առաջ անհրաժեշտ է կատարել քաղաքի ինովացիոն միջավայրի հետազոտություն, որը հնարավորություն կտա պարզել քաղաքի ներդրումային գրավչությունը: Այս և մի շարք այլ քայլեր, թույլ կտան ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ քաղաքային տնտեսության որակական փոփոխությունների և քաղաքում ինովացիաների գեներացման համար: Քաղաքային տնտեսությունն անհրաժեշտ է փոխադրել զարգացման ինովացիոն ուղու:

Սրա գործիք կարող են լինել քաղաքի ինովացիոն համակարգի մեջ մտնող համալսարանները, գիտահետազոտական ինստիտուտները, տեխնոլոգիաների փոխանակման կենտրոնները, առևտրային ֆիրմաների գիտական բաժինները, ինչպես նաև քաղաքային իշխանության մարմինները, որոնք զբաղվում են ինովացիոն քաղաքականության մշակմամբ: Սրանք կարող են դառնալ քաղաքային տնտեսությունը զարգացման ինովացիոն ուղու փոխադրելու առանձնահատուկ գործիք: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր ռեսուրսները և գործառութները, ինչը վկայում է, որ ինովացիոն համակարգի ձևավորման ընթացքում ենթադրվում է, որ աճում է սիներգետիկ էֆեկտը, որի համաձայն քաղաքի ինովացիոն համակարգի արդյունավետությունը կարելի է ապահովել դրա բոլոր մասնակիցների փոխգործունեության ռացիոնալ ուղիների որոշման և տնտեսական հարաբերությունների կատարելագործման հիման վրա:

Այսպիսի հարցադրումը թույլ է տալիս ոչ միայն կենտրոնացնել ու ճշգրտել քաղաքի ինովացիոն համակարգի կայացման ֆունկցիոնալ և կառուցվածքային հաջորդականությունը, այլև բացահայտել դրա ձևավորման առանցքային հիմախնդիրները:

Երևանի տնտեսությունը ՀՀ գիտելիքատար ճյուղերի և ոլորտների կլաստեր է, որոնք պատրաստ են նոր տեխնոլոգիաների յուրացման և տարածման համար և ամուր կապերով կապված են ինովացիաները նախագծող, ստեղծող կազմակերպությունների հետ: ՀՀ Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման շրջանակներում Երևանի քաղաքային իշխանությունները չեն կարող անմասն մնալ այդ գործընթացին մասնակցությունից: Երևանի բնակչությունը պետք է անմիջական մասնակցություն ունենա գիտության և տեխնիկայի նվաճումների անընդհատ օգտագործման գործընթացին: Ինովացիոն ոլորտի զարգացումը[a] որպես հանրային ինստիտուտի, ներառելով կոլեկտիվ հետազոտությունների կազմակերպումը, հանգեցնում է նրան, որ ակնհայտ է դառնում գիտատեխնիկական և ինովացիոն զարգացման պատասխանատվության գիտակցման և որորտի կարգավորման գործառույթի անհրաժեշտությունը քաղաքային իշխանությունների կողմից: Ներկայումս բնութագրական է իշխանության ինստիտուտների գերիշխումը սեփականության ինստիտուտների նկատմամբ, որը արգելակում է շուկայական և ինովացիոն ինստիտուտների զարգացումը:

Խոշոր քաղաքներում ինովացիոն տնտեսության ձևավորման հիմքում պետք է դրվեն ինստիտուցիոնալ մեխանիզմները, որոնք իրենցից ներկայացնում են ինովացիոն գործունեության իրականացման ձևերի, մեթոդների և գործիքների ամբողջություն, որը գեներացնում է անհրաժեշտ ռեսուրսներ և տիրապետում է ինովացիոն ակտիվության խթանման լծակների:

Ներկայումս կարևորվում է տեղական ինքնակառավարման համակարգի ինստիտուցիոնալ կարգավորումը և համայնքային կառույցների գործունեության

իրավական ապահովումը, ընդ որում այդ գործընթացում առանձնահատուկ տեղ է տրվում համայնքային կառավարման տնտեսական գործառույթին[11]:
Քաղաքային տնտեսության արդյունավետ զարգացումը հնարավոր է միայն տեղական ինքնակառավարման արդյունավետ համակարգի իրացման պայմաններում:

Համայնքային տնտեսության կառավարման ոլորտում կատարվող տարբեր հետազոտություններ վկայում են մեթոդաբանական և մեթոդական բազմաթիվ չլուծված հիմնահարցերի գոյության մասին[12]:

Այս իմաստով, քաղաքային տնտեսության կարգավորման հիմնախնդիրների ուսումնասիրությունը կարևոր տեսական և գործնական նշանակություն կարող է ունենալ:

Հետազոտության երկրորդ՝ «Երևանի տնտեսության կարգավորման ուղղությունները» գլխում ներկայացվել են Երևան համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման վիճակը, Երևան համայնքի զարգացման քառամյա ծրագրի դրույթները, խնդիրները և գերակայությունները, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դերը տնտեսության կառավարման և կարգավորման արդյունավետության բարձրացման գործում:

Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման հարցում օպտիմալ կառավարչական որոշումների ընդունումը պահանջում է մի շարք իրավական, կազմակերպական, տեղեկատվական և վերլուծական խնդիրների համակողմանի մշակում և լուծման տարբերակների առաջադրում: Այս առումով կարևորվում է Երևանի տնտեսական և սոցիալական զարգացման ցուցանիշների համեմատական վերլուծությունը: Այդ ցուցանիշներն արտահայտում են քաղաքի տնտեսության վերարտադրության գործընթացի և սոցիալական իրավիճակի փոփոխման առանձնահատկությունները: Այս խնդրի լուծումը պահանջում է համալիր մոտեցում ցուցաբերել Երևանի զարգացման մակարդակի գնահատմանը և այն բնութագրող, ընդհանրացնող ցուցանիշների որոշմանն ու համադրմանը[13]:
Երևանի տնտեսության զարգացման և կառավարման արդյունավետության ապահովման կարևորագույն քայլերից մեկը կարելի է համարել 2008 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, ըստ որի Երևանը ստացավ համայնքի կարգավիճակ: Այս կերպ Երևանը որպես մեկ միասնական համայնք դիտարկելը հնարավորություն տվեց մեծացնել տեղական ինքնակառավարման մարմնի դերն ու նշանակությունը, ապահովել համայնքային իշխանությունների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը և դրանց ստացման մատչելիության և օպերատիվության բարձր մակարդակի ստեղծումը՝ բնակչության կողմից համայնքը որպես իր անդամների շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով ստեղծված միավորի ընկալման և համայնքնային խնդիրների լուծմանը մասնակցելու

---

[11] Налесная Я. А. ‘‘Совершенствование системы экономического управления развитием муниципального образования’’ автореферат диссертации на соискание ученой степени к. э. н.: Таганрог 2005 г.

[12] Синявский Ф. А. ‘‘Система показателей эффективности управления социально-экономическим развитием муниципального образования’’ автореферат диссертации на соискание ученой степени к. э. н: Владимир 2010 г.

[13] «Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները ՀՀ-ում», Երևան 2009, Հանրապետական գիտաժողովի նյութեր, էջ 34

պատրաստակամության բարձրացման միջոցով: Ինչի իրականացման համար տնտեսության ցանկացած մակարդակում կարևոր պայմաններից մեկը գործունեության ծրագրավորումն է՝ տարբեր ժամանակահատածների ընդգրկումով:

Հաշվի առնելով Երևանի տնտեսության ռազմավարական նշանակությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության համար՝ մեծ է Երևանում տեղական ինքնակառավարման մարմինների դերը, որի հիմնական խնդիրը Երևանի տնտեսության կայուն զարգացումն ու բնակչության բարձր կենսամակարդակի ապահովումն է: Հանրապետության աշխատանքային ռեսուրսների 34,8%-ը և տնտեսապես ակտիվ բնակչության 33,1%-ը, զբաղվածների 28,3%-ը, ինչպես նաև տնտեսապես ոչ ակտիվ բնակչության 38%-ը բնակվում են Երևանում [14] : Զբաղվածության կրճատմանը զուգընթաց նկատվել է գործազրկության աճ: Երևանում զբաղվածության մակարդակը 2011թ.-ին 2008թ.-ի համեմատ նվազել է 4,3%-ով, իսկ գործազրկությունը նույն ժամանակահատվածում աճել է 32,7%-ով[15]:

Երևանը հանրապետության խոշորագույն արդյունաբերական և տնտեսական կենտրոնն է:

Աղյուսակ 1:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը ՀՀ-ում և Երևան քաղաքային համայնքում

		Հայաստանի Հանրապետություն					ք. Երևան				
		2008	2009	2010	2011	2011թ. 2010թ. Համե-մատ	2008	2009	2010	2011	2011թ. 2010թ. Համե-մատ
1.	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ ներով, մլն.դրամ	7392919	6693989	8244300	9989637	21.2%	36255.7	3026579	3545027	4234359	19.4%
2.	Պատրաստի արտադրան-քի իրացումը, ընթացիկ գներով, մլն.դրամ	7296153	6736048	8230172	9693225	17.8%	353738	3020647	3554479	4120488	15.9%
3.	Արդյունաբեր-ական արտադրան-քի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %	101.7	92.4	109.7	113,9	-	101.7	91.3	105.8	111,4	-

Նկատելի է, որ թե՞ ՀՀ-ում և թե՞ Երևանում ճյուղը զգալի անկում է ունեցել 2009թ.-ին, 2008թ.-ի համեմատ թողարկված արտադրանքի ծավալը ՀՀ-ում նվազել է 9.5%-ով, իսկ 2011թ. 2010թ.-ի համեմատ ավելացել է 21.2%-ով: Երևանում նույն ժամանակահատվածներում համապատասխանաբար՝ նվազել է 16.5%-ով և ավելացել՝ 19.4%-ով: Ճյուղը աստիճանաբար վերականգնվեց համաշխարհային տնտեսությունում մետաղների գների աճի և կառավարության իրականացրած համակարգված հակաճգնաժամային քաղաքականության արդյունքում:

[14] «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով» 2012թ., էջ՝ 80-81
[15] «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով» 2012թ., էջ՝ 85-88

Հանրապետությունում արդյունաբերական արտադրանքի ծավալի աճմանը զուգընթաց առաջանցիկ տեմպերով աճել է մայրաքաղաքում թողարկվող արտադրանքի ծավալը: 2011թ. Երևան քաղաքում, ընթացիկ գներով, թողարկվել է 423435,9 մլն դրամի արդյունաբերական արտադրանք և իրացվել է 412048,8 դրամի պատրաստի արտադրանք, որոնք հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկի [16]: Արդյունաբերական արտադրանքի նման տեմպերով աճը վկայում է, որ մոտակա տարիներին նույնպես կպահպանվի Երևան քաղաքի գերիշխող դերը ՀՀ տնտեսությունում:

ՀՀ մասշտաբով 2011թ. տվյալներով արդյունաբերական արտադրանքի 42,4%-ը բաժին է հասնում Երևանին[17]: ՀՀ բոլոր մնացյալ վարչատարածքային միավորները միասին թողարկում են արդյունաբերական արտադրանքի 57,6%-ը:

Գծապատկեր 1.
ՀՀ-ում արդյունաբերական արտադրության թողարկման ծավալների կառուցվածքն[a] ըստ Երևան քաղաքային համայնքի և մարզերի՝ 2011թ. (%-ային հարաբերակցությամբ)



Խոշոր քաղաքային համայնքի զարգացման տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն ունի տրանսպորտային համակարգի զարգացումը: Տրանսպորտային խնդիրների լուծումը, որպես կանոն, գրեթե բոլոր քաղաքային բնակավայրերում հասարակական կյանքի բնականոն ընթացքը պայմանավորող հիմնական գործոններից մեկն է, և դրանց հետևողական ու արդյունավետ լուծումը մեր մայրաքաղաքում նույնպես կապահովի հասարակական և անհատական տրանսպորտի փոխլրացումը՝ մեր համաքաղաքացիներին ընձեռելով տրանսպորտային սպասարկման ձևերի ընտրության հնարավորություն:

ՀՀ-ում ուղևորափոխադրումների ծավալը 2011թ. -ին [18] նախորդ տարվա համեմատ ավելացել է գրեթե 1%-ով, իսկ Երևանում՝ 0,9%-ով՝ կազմելով համապատասխանաբար 151133,7 հազ. մարդ և 124631 հազ. մարդ: ՀՀ-ում 2011թ.-ին ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը կազմել է 1614,4 մլն ուղևոր-կմ, որից Երևանին բաժին է ընկնում 71,1%-ը (1148,5 մլն ուղևոր-կմ):

[16] «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով» 2012թ., էջ՝ 26
[17] «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով» 2012թ., էջ՝ 26
[18] «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով» 2012թ.,էջ՝ 50

Մետրոպոլիտենով ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը ընդհանուր ուղևորափոխադրումների ծավալում կազմում է մոտ 7%: Նկատի ունենալով վերջին տարիներին մայրաքաղաքում ավտոտրանսպորտի ավելացման միտումները՝ քաղաքային իշխանությունները արդյունավետ են համարում ավտոբուսները քաղաքային երթուղային ցանցում ավելացնելու և զուգահեռաբար միկրոավտոբուսների թիվը նվազեցնելու քաղաքականությունը: Առանցքային հարցերն են՝ բավարարել աճող պահանջարկը և բարձրացնել ծառայությունների որակը քաղաքի ծանրաբեռնված կենտրոնական հատվածում: Հասարակական տրանսպորտի մատուցած ծառայությունների ցածր որակական միջավայրի առկայությունը խթանում է մասնավոր փոխադրամիջոցների օգտագործումը: Երթուղային տաքսիների քանակը մինչև 2020թ. 3130–ից կկրճատվի մինչև 845, դրանք կփոխարինվեն մեծ և միջին ավտոբուսներով և տրոլեյբուսներով[19]:

Գործող երթուղային ցանցում հաշվի չի առնված մետրոյի գոյությունը, և այն ամենևին ինտեգրված չէ վերգետնյա ուղևորատրանսպորտային համակարգի հետ: Այդ պատճառով այն գտնվում է անհավասար մրցակցության մեջ: Երևանի մետրոպոլիտենի ծառայությունների անվտանգ և ապահով իրագործման աշխատանքները բարելավելու նպատակով Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ կնքվել է համաձայնագիր, որի հիման վրա նախատեսվում է իրականացնել ծրագիր՝ 15.0 մլն[20] եվրո ներդրումային արժեքով:

Երևանի զարգացման քառամյա ծրագրի նպատակն է Երևան քաղաքի կայուն և համաչափ զարգացման ապահովումը, բնակչության կենսական շահերը և բարեկեցությունը, մարդկային զարգացումը և աղքատության կրճատումը՝ որպես հետևանք երաշխավորելով երևանցիների կյանքի որակի էական բարելավումը:

Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունների և գերակայությունների հաստատման հիմքեր են հանդիսացել ՀՀ կառավարության ծրագրերը, աղքատության հաղթահարման ծրագիրը, դրանցում նախանշված զարգացման ռազմավարական ուղղությունները, նպատակները և գերակայությունները[21] :

Աշխատանքում, Երևանի տնտեսության զարգացման արդյունավետ կարգավորման նպատակով առաջարկվել է Երևանի սոցիալ տնտեսական զարգացման արդյունավետ կարգավորման հետևյալ սկզբունքների հաջորդական տրամաբանական պահպանումը.

Երևանի տնտեսության տարբեր ենթահամակարգերի զարգացման գործընթացի համալիրությունը, հավասարակշռվածությունը և փոխադարձ կապվածությունը,

- Երևանի տնտեսության տարբեր ոլորտների զարգացման ուղղությունների համապատասխանությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությանը,

---

[19] Ասիական Զարգացման Բանկ ՏԱ 4973-ARM ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարություն <<Հայաստանի տրանսպորտի ոլորտի զարգացման ռազմավարություն 2020թ .>> Վերջնական հաշվետվություն Երևան, 2008թ.

[20] Եվրոպական ներդրումային բանկի տեղեկատվությունը Երևանի մետրոյի նախագծի մասին www.eib.org/projects/press/2010/2010-136-first-european-investment-bank-loan-to-armenia-for-yerevan-metro-upgrade.htm

[21] «Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները ՀՀ-ում», Երևան 2009, Հանրապետական գիտաժողովի նյութեր, էջ 42 և էջ 43

- քաղաքի կենսագործունեության ապահովման համակարգերի գործունեության երաշխավորված կայունության, վստահելիության, անվտանգության և որակի ապահովումը,
- համայնքային հիմնահարցերի լուծման ընթացքում Երևանի քաղաքացիների սոցիալական ակտիվության բարձրացումը, բնակիչների պատասխանատվության զգացումը իրենց քաղաքում պատշաճ կյանքի որակի համար,
- Երևանի տնտեսության զարգացման գերակայությունների միջճյուղային բնույթի և շահերի հաշվառումը,
- Երևանի տնտեսության զարգացման մշակվող ծրագրերի սոցիալական ուղղվածությունը և դրանց իրականացման մշտական մոնիտորինգի արդյունավետությունը և կառավարելիությունը:

Աշխատանքում պարզվել է, որ քաղաքային տնտեսության ծրագրի պատասխանատուների հասցեականությունը կարող է մեծացնել քաղաքապետարանի աշխատանքների թափանցիկությունը, իսկ տարածքի համաչափ զարգացման ապահովման միջոց կարող է դառնալ վարչական շրջանների զարգացման ծրագրերի վերահսկողությունն ու գնահատումը:

Քաղաքային համայնքի զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը ինքնակառավարման մարմինների կարողությունների ձևավորումն ու ամրապնդումն է: Տնտեսվարման ներկա պայմաններում մեծանում է խոշոր քաղաքային համայնքի դերը, և արդյունավետ կառավարումը նշանակում է, որ այն պետք է նպաստի կյանքի կոչելու խոշոր քաղաքային տնտեսության և ողջ երկրի զարգացման համար կենսական նշանակություն ունեցող առաջնահերթությունները: ‘Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին’ ՀՀ օրենքը հնարավորություններ է ստեղծում բացահայտելու, գնահատելու և օրենսդրորեն կարգավորելու այդ առաջնահերթությունների իրացումը:

Տարբեր իրավական փաստաթղթեր պարունակում են տարածաշրջանային կառավարման տարբեր սահմանումներ: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 3.1 հոդվածը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքները և իրական կարողությունները նպատակաուղղված են պետական գործերի մի զգալի մասի կանոնակարգմանը և կառավարմանը՝ գործելով օրենքի շրջանակներում սեփական պատասխանատվությամբ և ելնելով տեղական բնակչության շահերից [22] : Տեղական մակարդակում պետական քաղաքականությունն իրենից ներկայացնում է համայնքի զարգացման օբյեկտիվ միտումների և դրանում իրենց շահի վերաբերյալ մարդկանց գերակշռող մասի սուբյեկտիվ դատողությունների միախառնուրդ [23]:

Հաշվի առնելով միջազգային փորձը՝ Երևանում իրականացվում է տեղական ինքնակառավարման երկաստիճան համակարգ, որի անհրաժեշտությունը պայմանավորված է տեղական իշխանության և բնակչության կապով, այստեղից էլ՝ վարչական շրջանների անհրաժեշտությունը: Օրենքով է նախատեսվում Երևանի քաղաքապետի անուղղակի ընտրության կարգը: Ու հաշվի առնելով տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման միասնական կարգավորումը՝ քաղաքապետին վերապահված են ինչպես տեղական ինքնակառավարման լիազորություններ, այնպես էլ պատվիրակված լիազորություններ:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրվեցին Երևան խոշոր քաղաքային համայնքի զարգացման հիմնարար սկզբունքները, իրավականորեն

---

[22] Europen Charter of Local Serlf-Gevernment Strasburg, 15. X. 1985, *www.conventions.coe.int/treaty/en/html/122,htm*

[23] Հանրային քաղաքականության վերլուծություն: Ի.գ.դ., պորֆեսոր Ա.Շ. Հարությունյանի և տ.գ.դ., պրոֆեսոր Յու. Մ. Սուվարյանի ընդհանուր խմբագրությամբ: Ե., «Պետական ծառայություն» հրատ.,2005 էջ 111

կանոնակարգվեցին Երևանի և կենտրոնական կառավարման համակարգերի միջև փոխհարաբերությունները, քաղաքացիական հասարակության կայացումն ու ժողովրդավարության զարգացումը խոշոր քաղաքային համայնքում:

Ատենախոսության երրորդ՝ Երևան համայնքի տնտեսության կարգավորման մեխանիզմների բարելավման ուղիները՝ գլխում քննարկվել են Երևանի տարածքային համաչափ զարգացման խնդիրները և դրանց լուծման հնարավորությունները, ներկայացվել են Երևան համայնքի տնտեսական գործունեության բարելավման լծակները:

Զարգացման ներկայիս փուլում մեզ համար հատկապես կարևորվում է այնպիսի քաղաքականության մշակումն ու կիրառումը, որը ոչ միայն չի խորացնում զարգացման անհամամասնությունները, այլ նաև տարածքների համաչափ զարգացում է ապահովում:

Տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհավասարությունները, որպես կանոն, բնութագրվում են դրանց տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշներով: Տարբեր երկրներում, անկախ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակներից, որոշ համայնքներ ավելի հարուստ են մյուսներից և ի վիճակի են ինքնուրույն կառավարել իրենց գործերը: Մյուսներն ավելի մեծ կախվածություն ունեն կենտրոնական իշխանությունից ստացվող օգնությունից: Սակայն ընդհանուր առմամբ, վերջին տարիներին նկատելի է տարածքային կառավարման մարմինների իշխանության ընդլայնման միտումը: Այս ամենն իր հերթին պայմանավորված է համայնքի բնակչության թվով և զբաղեցրած տարածքով: Հայաստանում ևս, ինչպես հայտնի է, տարածքային կառավարման մարմինների լիազորությունները պայմանավորված են համայնքների չափերով, բնակչության թվաքանակով և տնտեսության զարգացման մակարդակով, որոնք միմյանցից խիստ տարբերվում են: Համանման խնդիր գոյություն ունի նաև այլ երկրներում[24]:

Ֆինանսական համահարթեցումը տարածքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար վարչական շրջանների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերության նվազեցումն է[25] :

Երևանի տարածական զարգացման և պլանավորման գործառույթների համակարգը, նպատակաուղղված լինելով եզակի ռազմավարական ռեսուրսի՝ քաղաքի տարածքի պատշաճ կազմակերպման հիմնահարցերի լուծմանը, դիտարկվում է որպես բնակչության զարգացման տարածական վեկտոր: Մայրաքաղաքի հեռանկարների պլանավորումը հիմնվում է սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի վրա, որոնց կոնկրետ իրագործումն իր հերթին անհնարին է առանց տարածական զարգացման համալիր խնդիրների հաշվառման և տարածքային առանձնահատկությունների հետ փոխկապակցման[26]:

Երևանի զարգացման միտումներն ուղղված են Երևան քաղաքի կայուն և համաչափ զարգացմանը, բնակչության կենսական շահերի և բարեկեցության ապահովմանը: Սա նշանակում է, որ Երևան խոշոր քաղաքային համայնքի զարգացման ծրագրերը, որոնց նպատակը Երևանի տարածական համաչափ զարգացումն ու պլանավորումն է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, մշակելիս պետք է առաջնորդվել վարչական շրջաններում առկա հիմնախնդիրների լուծման առաջնահերթություններով: Այսինքն՝ զարգացման ծրագրի հիմքում պետք է դրվի տարածական պլանավորման հիմնադրույթը:

Մայրաքաղաքի համաչափ զարգացումը պայմանավորված է յուրաքանչյուր վարչական շրջանում տարվող աշխատանքներով: Աշխատանքում ներկայացվել է, որ

---

[24] Հանրային քաղաքականության վերլուծություն: Ե., “Պետական ծառայություն” հրատարակչություն,2005, էջ 15:

[25] “ֆինանսական համահարթեցման մասին” ՀՀ օրենք, հոդված 3.

[26] «Կայուն զարգացման ծրագիր» 2008թ., էջ՝295

ժամանակակից մեթոդներով մշակված զարգացման ծրագրերի իրացմամբ կարելի է նպաստել ինչպես վարչական շրջանի, այնպես էլ մայրաքաղաքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Ֆինանսական համահարթեցման համակարգի կատարելագործման հրամայականը պահանջում է համայնքային բյուջեների ծախսային նորմատիվների հաշվարկման նոր մեթոդաբանության մշակում և կիրառում[27]:

Ֆինանսական համահարթեցման համակարգի արդյունավետության բարձրացման ուղիներից մեկը համայնքներին դոտացիների հատկացումն է՝ դրանց ծախսային պահանջմունքների գնահատման արդյունքների հիման վրա: Հիմնախնդրի լուծման այդպիսի մոտեցման արդարացիության հիմնավորումն իր արտացոլումն է ստացել աշխարհի շատ երկրների միջբյուջետային հարաբերություններում, որոնց հիմքում դրված ծախսային նորմատիվները հաշվարկվում են երկու տարբեր մոտեցումներով՝ հանրային ծառայությունների անհրաժեշտ չափորոշիչների փորձագիտական գնահատմամբ և ըստ համայնքների՝ հանրային ծառայությունների նվազագույն ծավալի ծախսերի սահմանմամբ[28] :

Ինչպես վկայում է անցումային տնտեսությունների փորձը, գործընթացի արդյունավետությունը կախված է ոչ միայն ինշխանության վերին օղակների ու վարչակազմի գործունեությունից և կազմակերպման մակարադակից, այլև համայնքների զարգացմանն ուղղված տարածքային մարմինների կողմից իրականացվող բազմաբնույթ ծրագրերի արդյունքներից[29] :

Երևանի համաչափ զարգացումն ապահովելու համար տեղական ինքնակառավարման մարմիններին անհրաժեշտ է կատարելագործել կառավարման համակարգը և այդ համակարգում կիրառել ռազմավարական կառավարման արդի մեթոդները: Վերլուծությունների և խոշոր քաղաքների կառավարման արտասահմանյան փորձի ուսումնասիրությունների արդյունքում նկատում ենք, որ Երևան քաղաքի կառավարման համակարգում լիովին չեն կիրառվում ռազմավարական կառավարման արդի մեթոդները, սահմանված չեն Երևան քաղաքի տարածական զարգացման առաքելությունը և գլխավոր նպատակը, որի արդյունքում Երևան քաղաքի համաչափ զարգացումը կլինի գերակա խնդիր և բոլոր ծրագրերը ուղղված կլինեն այդ հիմնադրույթի ապահովմանը: Առաքելության, նպատակների և ռազմավարության առկայությունը հնարավորություն կտան Երևան քաղաքի կառավարման համակարգի տարբեր օղակներին համաձայնեցնել իրենց նպատակները և սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը: Դրանց իրացման արդյուքներով կգնահատվեն Երևան քաղաքի զարգացման միտումները:

Աշխատանքում եզրակացվել է, որ խոշոր քաղաքային տնտեսության զարգացումը ենթադրում է մշակել վարչական շրջանների զարգացման անհամաչափության հաղթահարման ուղղություններ և մեխանիզմներ, որոնք անհրաժեշտ են այդ շրջանների զարգացման առանձին քաղաքականությունների իրացման համար: Դրանք ներառում են տարբեր հիմնախնդիրներ, որոնց լուծումը, կապված վարչական շրջանների զարգացման անհամաչափության հաղթահարման հետ, պահանջում է գնահատել այդ շրջանների զարգացման միջավայրը, կարողությունների գործարկման մակարդակը, ռեսուրսաապահովումը և պետական աջակցության հնարավորությունները:

Աշխատանքում կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները վկայում են, որ առանձին վարչական շրջաններին ֆինանսական օգնության բաշխման համակարգը

---

[27] Յու.Մ.Սուվարյան. «ՀՀ տնտեսության կառավարման արդյունավետության, բարձրացման արդի հիմնախնդիրները», «Էկոնոմիկա» N3, Երևան, 1999, էջ 31

[28] Якобсоп Л.И. Экономика общественного сектора: Основы теории государственных финансов: Учебник для бузов-М.:Асцект Пресс, 1996, стр. 9

[29] Барыгин И. “Регионоведение”, Москва, 2007г., стр. 188

Երևան համայնքում դեռևս ձևավորված չէ, հստակ չեն համահարթեցման տրանսֆերտների հաշվարկման սկզբունքները, գոյություն չունեն ծախսային որոշակի նորմատիվներ, որոնք կարող էին հենվել նվազագույն ծախսերի սահմանման տարբեր գործոնների վրա:

Տնտեսական զարգացման ներկա փուլում խիստ կարևորվում է առանձին տարածաշրջանների զարգացմանն ուղղված համալիր և ամբողջական ծրագրի մշակումը, որով կսահմանվեն այդ ուղղությամբ քաղաքականության հիմնական ուղղությունները, դրանցով պայմանավորված գերակայությունները, ինչպես նաև նախատեսվող միջոցառումները և դրանց իրականացման ժանանակացույցը:

Ընդհանուր առմամբ քաղաքի հեռանկարային զարգացման պլանավորման և կանխատեսման գործիքներ են քաղաքի զարգացման գլխավոր հատակագիծը և սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումները, ներդրումային ծրագրերը:

Ռազմավարական ծրագիրը համայնքի ապագայի մասին երկարաժամկետ պատկերացումների ամբողջություն է և պարունակում է այն արդյունքները, որին ձգտում են տեղական ինքնակառավարման մարմինները:

Ռազմավարական պլանավորումը մեծ տեղ է հատկացնում կապիտալ զարգացման ծրագրերին: Համայնքի ենթակառուցվածքները կարիք ունեն պարբերաբար նորոգման, նորացման և զարգացման: Երկարատև ժամանակահատվածի համար պլանավորվող ծրագրերը պետք է ներառեն այդ հարցերը:

Ռազմավարական պլանավորմանն անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ, և դրա վերաբերյալ կան տարբեր ուսումնասիրություններ: Աշխատանքում առանձնացվել է Ջոն Բրիսոնի «Ռազմավարական պլանավորումը պետական և ոչ առևտրային կազմակերպությունների համար» ուսումնասիրությունը[30], ուր կարևորվել է տեղական ինքնակառավարման ոլորտում ռազմավարական պլանավորման գործընթաց դերը:

Աշխատանքում ցույց է տրվել, որ քաղաքային տնտեսության կարգավորման առումով ներկա պայմաններում առավել լայն տարածում ստացած գործիքներից են սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրերը:

Աշխատանքում պարզվել է, որ գոյություն ունեն մի շարք պայմաններ, որոնք պետք է հաշվի առնվեն նման ծրագրերի մշակման ընթացքում: Մասնավորապես, որպես այդպիսիք նշվել են ընտրված գերակայությունների հիմնավորվածությունը, ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման հաջորդականությունը, նորմատիվ իրավական և վարչական ապահովվածությունը և այլն: Ոչ պակաս կարևոր պայման է հանդիսանում ծրագրի իրականացման գործընթացի նկատմամբ մշտական մոնիտորինգի իրականացումը:

Սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրերի մշակումը պետք է բաղկացած լինի մի քանի փուլերից: Վերլուծությունները վկայում են, որ տնետեսական բարեփոխումների անցած ժամանակահատվածում արձանագրված բացասական երևույթների հիմնական պատճառներից մեկը հանդիսացել է դրանց ծրագրային ապահովվածության բացակայությունը, այսինքն՝ գործընթացն իրականացվել է առանց հստակ մշակված ռազմավարության: Այս առումով Երևան համայնքի զարգացման տեսանկյունից, կարևորվել է ոչ միայն դրա ծրագրային ապահովվածությունը, այլև նաև ծրագրերի իրականացման գործընթացի մշտական մոնիտորինգը և արդյունքների գնահատումը:

Աշխատանքում կատարված վերլուծությունից պարզվել է, որ մոնիտորինգը և արդյունավետության գնահատումը, ներկայումս զարգացած երկրներում դիտարկվում են

[30] Bryson, John M. Strategic Planning for Public and Nonprofit Organizations: A Guide to Strengthening and Sustaining Organizational Achievement, San Francisco, 1988.

խոշոր քաղաքների զարգացման ծրագրերի կարևոր բաղկացուցիչներ, որոնց հատկացվում են ծրագրի ընդհանուր բյուջեի զգալի մասը:

Գծապատկեր 2:Խոշոր քաղաքային համայնքի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման սխեման



Մոնիտորինգն անհրաժեշտ է իրականացնել որոշակի չափորոշիչների օգնությամբ:

Քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրերը, մի շարք պատճառներով պայմանավորված, չեն կարող միանման լինել, սակայն դրանցից յուրաքանչյուրն իրականացման գործընթացում անցնում է նույն փուլերը և դրանցից յուրաքանչյուրում անհրաժեշտ է իրականացնել մոնիտորինգ:

Աշխատանքում ներկայացվել է, որ չափորոշիչների օգնությամբ իրականացման գործընթացի գնահատումն անհրաժեշտ է միայն նպատակների և խնդիրների վերլուծության համար, քանի որ միջոցառումների իրականացումն ունի գնահատման հստակ սահմանված քանակական չափորոշիչներ: Այդ իսկ պատճառով դրանք առանձին համալիր չափումների անհրաժեշտություն չեն զգում: Պարզելու համար պլանային միջոցառումներն իրականացվել են թե ոչ,

բավական է օգտագործել դրանցում սահմանված ցուցանիշները: Սակայն այս դեպքում, որպեսզի տեղի չունենա մոնիտորինգի համակարգից միջոցառումների բացթողում, այդ ցուցանիշները շարադրվում են նաև նպատակային չափորոշիչների շարքում:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ ցանկացած գործընթացի պլանավորում սկսվում է քաղաքի տնտեսական և սոցիալական կառուցվածքի համալիր վերլուծությունից:

Աշխատանքում ցույց է տրվել, որ սոցիալական և մեթոդաբանական առումով արդարացված է ռազմավարական կարևորագույն նպատակ հռչակել բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի բարձրացումը և որ խոշոր քաղաքային տնտեսության զարգացման ռազմավարության իրականացման առումով կարևոր նշանակություն ունեն այն նպատակային ծրագրերը, որոնք ունեն որոշակի ժամկետային սահմանափակումներ և խոշոր քաղաքային համայնքի բնակչության կյանքի որակի բարելավման պլանային խնդիրների լուծման հստակ ուղղվածություն:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում հիմնվելով կատարված ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքների վրա ամփոփ ձևով ներկայացվել են հիմնական եզրակացությունները:

1. Տնտեսական և սոցիալական զարգացման գործընթացի կառավարման հիմնարար մեթոդներից է ծրագրանպատակային կառավարումը և կարգավորումը: Միջնաժամկետ և երկարաժամկետ զարգացման ծրագրերի մշակումն ու իրականացումը քաղաքային բնակավայրերի զարգացմանն ուղղված անհրաժեշտ միջոցներ են: Կարևորվում են սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման հետևյալ սկզբունքները՝

- ծրագրում դրվող խնդիրների ու նպատակների համապատասխանությունը քաղաքի զարգացման փաստաթղթերում ամրագրված խնդիրներին և քաղաքային իշխանությունների կողմից հռչակված գերակայություններին,
- ծրագրի իրականացման համար նախատեսվող ռեսուրսների, կատարողների և միջոցառումների իրականացման ժամկետների հիմնավորվածությունը,
- ծրագրային արդյունքների ձեռքբերման ժամկետների սահմանումը:

2. Վերջին տարիներին Երևան քաղաքի զարգացումը հանգեցրել է մի շարք հիմանխնդիրների առաջացման, որոնց լուծման պարագայում միայն հնարավոր կլինի ապահովել բնակչության բարեկեցիկ կյանքի պայմաններ: Որպես այդպիսիք, նախ և առաջ պետք է նշել աշխատատեղերի և ֆինանսական ռեսուրսների սահմանափակությունը, բնակչության սոցիալական բևեռացման աստիճանի խորացումը, մատուցվող ծառայությունների որակը, ենթակառուցվածքային ցածր ապահովվածությունը, ոչ արդյունավետ հողօգտագործումը, ճանապարհային ցանցի գերբեռնվածությունը, կանաչ տարածքների սահմնափակությունը, շրջակա միջավայրի աղտոտման մեծ ծավալները, կոմունալ-կենցաղային ծառայությունների ցածր որակը և այլն: Արտաքին և ներքին միգրացիայի մեծ ծավալները, ինչպես նաև արտադրության և սպառման ոչ կայուն բնույթը այդ հիմնախնդիրներին առավել մեծ սրություն են հաղորդում:

3. Երևանի տնտեսության զարգացման, բնակչության հիմնախնդիրների առավել արդյունավետ լուծումների մշակման առումով, որպես քաղաքային իշխանության գործընկեր պետք է հանդես գան, քաղաքացիական հասարակության տարբեր

ներկայացուցիչները, քանի որ դրանք առավել մոտ են կանգնած բնակչությանը և, հետևաբար, նաև առավել օպերատիվ կերպով կարող են մասնակցել տվյալ գործընթացին: Անհրաժեշտ է, որպեսզի քաղաքային իշխանությունը գիտակցի սոցիալական ինստիտուտների դերը, առավել թափանցիկ դարձնի իր գործունեությունը և վերջիններիս հնարավորություն տա լայնորեն մասնակցելու սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության, ծրագրերի մշակման, իրականացման, վերահսկողության, գնահատման գործընթացներին:

4. Երևան համայնքի տնտեսական քաղաքականության կարևոր ուղղություններից է սոցիալ-տնտեսական հարաբերությունների կարգավորմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների, գործողությունների ու քայլերի, ինչպես նաև դրված նպատակներին հասնելու սկզբունքների, լծակների ու մեթոդների արդյունավետ օգտագործման ապահովումը: Քաղաքականության նախատեսված միջոցառումների կատարման անհետևողականությունը, համայնքային զարգացման ռազմավարության, ինչպես նաև հիմնավոր սկզբունքների և մոտեցումների բացակայությունը կարող են հանգեցնել վարչական շրջանների անհամաչափ զարգացմանը և սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացմանը:

5. Տնտեսական զարգացման ներկա փուլում հանրապետությունում գոյություն ունեցող լուրջ խնդիրներից է տարածքային բևեռացումը, ինչի արդյունքում զգալի տարբերություններ գոյություն ունեն քաղաքային տարբեր բնակավայրերի զարգացման մակարդակների միջև: Ընդհանուր առմամբ տարածքային զարգացման անհամաչափությունները հանրապետությունում սկսել են խորանալ տնտեսական աճի արագացմանը զուգընթաց, և հիմնականում արտահայտվում են Երևանի տնտեսական դերի և նշանակության աճով, որի արդյունքում կենսամակարդակի տարբերությունը Երևանի և հանրապետության մարզերի միջև անընդհատ աճել է:

6. Տնտեսական զարգացման ժամանակակից փուլում խոշոր քաղաքային համայնքի զարգացումը գլխավորապես պետք է ուղղված լինի բնակչության կարիքների և պահանջմունքների, անվտանգության, կյանքի հարմարավետության, որակյալ կրթության հասանելիության, բարեկեցիկ կենսամակարդակի, աշխատանքի մատչելիության, ճկուն ենթակառուցվածքների ձևավորման, որակյալ սպասարկման, անհրաժեշտ ծառայությունների մատուցման ապահովմանը: Նշված խնդիրների լուծումը փաստորեն բնակչության բնականոն կենսագործունեության ապահովման հիմանական երաշխիքն է: Այս տեսնակյունից, խոշոր քաղաքային տնտեսության հեռանկարային զարգացումը պահանջում է երկարաժամկետ հատվածի համար հիմնարար փաստաթղթերի (ծրագրեր, հայեցակարգեր), և ռազմավարության մշակում՝ հիմնված տվյալ համայնքում առկա իրավիճակի, առանձնահատկությունների և երկրի տարածքային զարգացման օրինաչափությունների ու միտումների համակողմանի վերլուծության վրա:

7. Զարգացման ներկա փուլում խիստ կարևորվում է պլանավորման նոր գործիքների և միջոցների մշակումը, կառավարչական նորամուծությունների իրականացումը, որոնք կհամապատասխանեն շուկայական տնտեսության և ժողովրդավարական հասարակության ժամանակակից պահանջներին: Մեր կարծիքով Երևանի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրերի հիմնական նպատակը պետք է լինի քաղաքային տնտեսության զարգացման ուղղությունների և դրանց իրականացման ճկուն գործիքների

գիտականորեն հիմնավորված ընտրությունը, ինչը հնարավորություն կտա յուրաքանչյուր սուբյեկտի առավելագույնս իրացնել սեփական ներուժը և ապահովել առողջ, լիարժեք և ստեղծագործ կյանքի պայմաններ:

8. Քաղաքային տնտեսության զարգացման ռազմավարության իրականացման առումով կարևոր նշանակություն ունեն այն նպատակային ծրագրերը, որոնք ունեն որոշակի ժամկետային սահմանափակումներ և պլանային խնդիրների լուծման հստակ ուղղվածություն: Ծրագրային միջոցառումների համալիրի գնահատման համար ռազմավարության համապատասխանության տեսնակյունից պետք է ներդրվի չափորոշիչների համակարգ, որոնց օգնությամբ կգնահատվի ռազմավարական պլանի խնդիրներին նպատակային միջոցառումների համապատասխանությունը, նպատակային ծրագրի իրականացման մեխանիզմի արդյունավետությունը, ծրագրի իրականացման վարչական և նորմատիվ իրավական ապահովվածությունը:

9. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան քաղաքում են կենտրոնացված Հայաստանի խոշորագույն գիտական և կրթական կենտրոնները՝ առաջարկվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շրջանակներում ստեղծել մի կառույց, որն ըստ ոլորտների կհամագործակցի համապատասխան գիտական և ուսումնական հաստատությունների հետ՝ թե՛ իր առջև ծառացած խնդիրների լուծման ու զարգացման միտումների շրջանակներում առկա հարցերի պարզաբանման և թե համապատասխան կադրերի նպատակային պատրաստման համատեքստում: Գտնում ենք, որ այս մոդելի ստեղծման անհրաժեշտությունը հասունացած է և հաշվի առնելով, որ Երևանի քաղաքապետարանում առկա է Զարգացման և ներդրումային ծրագրերի գլխադասային վարչությունը, որը զբաղվում է նաև նորարարությունների, տարբեր առաջարկների վերլուծությամբ և անհրաժեշտության դեպքում ներդրմամբ, ինչպես նաև պատասխանատու է Երևան համայնքի զարգացման ծրագրերի և տեսլականի ստեղծման համար, կարելի է դրա ենթակայության ներքո ստեղծել, ապա զարգացնելով՝ դարձնել առանձին խոշոր, բազմագործառութային և ազդեցիկ կառույց:

10. ՀՀ-ում հատկապես կարևորվում է Երևանի քաղաքային տնտեսության զարգացումը, ուր տեղաբաշխված է երկրի մարդկային, արտադրական և կառավարչական ռեսուրսների զգալի մասը: Երևանի տնտեսության զարգացման ծրագրային ապահովվածության անհրաժեշտությունը բարձրացնում է քաղաքային տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման և հաստատման կանորությունը:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլված են հրատարակված հետևյալ գիտական հոդվածներում.

1. **Սահակյան Մ.Ա., Երևան համայնքի սոցիալ-տնտեսական համառոտ ցուցանիշները // Հայաստան, Ֆինանսներ և էկոնոմիկա, N12 (138), դեկտեմբեր, Երևան, 2011, էջ 17-18:**
2. **Սահակյան Մ.Ա., Երևանի քաղաքապետի՝ որպես համայնքի ղեկավարի լիազորությունների արդյունավետությունը կառավարման ոլորտում // Հայաստան, Ֆինանսներ և էկոնոմիկա, N12 (138), դեկտեմբեր, Երևան, 2011, էջ 18-20**
3. Саакян М.А., Тигранян И.Т., Карапетян Ц.Дж., Общая характеристика экономики крупных муниципальных общин // Вісник Донецкого національного університету, Серія В еконпміка і право, Спецвипуск 2012, том 2, стр. 311-313
4. Սահակյան Մ.Ա., Քաղաքային տնտեսության զարգացման միտումները և կարգավորման անհրաժեշտությունը // Հայաստան, Ագրոգիտություն 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, Երևան, 2012, էջ 671-674
5. Սահակյան Մ.Ա., Քաղաքային տնտեսության զարգացման միտումները և կարգավորման անհրաժեշտությունը՝ Երևանի օրինակով // Հայաստան, Ֆինանսներ և էկոնոմիկա, N4 (154), ապրիլ, Երևան, 2013, էջ 16-18

Саакян Микаел Ашотович

Проблемы регулирования экономики в крупных городских общинах

(на примере г. Еревана)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02. “Экономика, управление хозяйством его отраслями”. Защита состоится 13 марта 2015г. В 15:00 ч. на заседании специализированного совета 015 ВАК РА по экономике, действующего в Ереванском государственном университете, по адресу 0009, г. Ереван, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена выявлению теоретических, методологических, правовых и организационных проблем, исследование специфики экономики крупных городов, определения приоритетов развития и их направления, регулирования и презентации эффективных форм разработки программы.

Закон РА о местном самоуправлении в Ереване, принятый в 2008 году 26 декабря, полностью изменил статус Еревана: 12 отдельных общин обьединились в одну общину-ереванскую общину. Это был новый подход и вероятно первый опыт в рамках увеличения общин в независимой Республике Армения, что повышает эффективность уровня управления, при унифицированном бюджете облегчает планирование и, после утдверждения представлении концепции города, осуществление соответствующих мероприятий.

В диссертации представлено, что на нынешнем этапе общественного развития наиболее выражены коренные изменения и они сконцентрированы в крупных городах. Диссертация доказывает, что в экономическом, политическом, социальном развитии РА Ереван имеет свое специальное место /играет очень важную роль/. Развитие городской экономики Еревана и их вызовы характерны для всей экономики и социальной жизни Еревана. Одновременно развитие Ереване наиболее влияет на потребительский спрос и предложение, и формирование рабочих и финансовых потоков страны. Основной целью диссертации является идентификация проблем развития городской экономики в условиях рыночных отношений и создание плана возможностей и предложений для их решения. В работе были поставлены и решены следующие задачи

- Исследовать сущность городской экономики, ее специфики и показать ее роль в улучшение жизненных условий жителей
- Исследовать структуру городской экономики Еревана, и выяснить проблемы взаимосвязи компонентов.
- Исследовать проблемы инфраструктурного обеспечения развития городской экономики и направления их решения и приоритетность

- Исследовать необходимость регулирования городской экономики Еревана, тенденцы развития и методы их проявления.
- Исследовать методы регулирования городской экономики Еревана, специфики разработки программы развития и тезисы.
- Исследовать неровное развитие отдельных административных округов Еревана, определить возможности их уменьшения.
- Исследовать необходимость разработки стратегии экономического развития города Еревана и вероятность.

Основные научные результаты диссертации

На основе исследований и анализа в работе авторы определены следующие новоявления

- Было дано новое определение крупной городской экономики, сформировав как открытую /дисипатив/ социально-экономическую систему, рассматривая теорию синергетики как научную основу регулирования развития, когда планирование рассчитивыает потенциал самоорганизации крупной городской экономики, позволяет использовать потенциал по максимуму, направляя его на повышение уровни жизни горожан..
- Была сформулирована инновационная среда экономики Еревана и обоснована необходимость представления соответствующих индексов инновационной деятельности в программах развития экономики в отделе науки и инноваций.

- Было обосновано, что динамика развития крупных городов в общем определяет уровень развития территорий и всей страны, определена, раскрыта необходимость разработки стратегической программы для городской экономики Еревана и была разработана очередность этапов сформирования стратегического плана

Вопросы развития городской экономики были рассмотрены в комплексе региональной стратегии, в результате чего практическое использование разработанных подходов может обеспечить широкие возможности для повышения нормальной деятельности и благосостояния жителей Еревана.

MIKAYEL ASHOT SAHAKYAN

"THE MAIN PROBLEMS OF ECONOMY REGULATION IN BIG MUNICIPAL COMMUNITIES (BY THE EXAMPLE OF YEREVAN CITY)"

The abstract of Disserttion for pursuing the degree of Doctor of Economics in the fileld of 08.00.02 "Economics, Management of Economy and its Branches".
The defense of the Dissertation will take place on 15:00 o'clock at 015 Council of Economics at Yerevan State University of SCC RA: 52 Abovyan Street, Yerevan, Armenia, 0009.

RESUME

The dissertation is devoted to the theoretical, methodological, legal and organizational problems, the study of large urban economy peculiarities, identification, regulation of development priorities, presentation of efficient forms for elaboration of programs.

The law of RA on the local self-government in Yerevan adopted on 2008, December 26th has completely changed the status of Yerevan, 12 separate communities have unified into one community-community of Yerevan. This was new approach and probably the first attempt in Armenia's new independent Republic in the unification of the communities, which increases the level of the governance efficiency, in the case of common budget it facilitates the planning and the realization of the corresponding measures taken after the definition of the city vision.

The dissertation shows that at the current stage of social development, the occurring radical changes are the most vivid and are concentrated in large cities.

The dissertation proves that capital Yerevan has a particular role in economic, political and social development of the Republic of Armenia. The urban economy development of Yerevan and the existing challenges in it are characteristic for the entire economic and social life of the Republic of Armenia. At the same time, the development of Yerevan leaves its maximum impact on the consumer supply and demand, formation of employment and financial flows.

The main objective of the dissertation is to identify the problems of economy development of Yerevan as a large community and elaboration of possibilities and proposals aimed to solve them.

The following problems have been studied and solved in the work:

- To study the essence and peculiarities of the large urban economy and to show its role for improving the living conditins of the population;
- to study the structure of urban economy of Yerevan and to identify the interrelation problems of its separate components;
- to study the problems of infrastructure security of urban economy development, and the directions and importance of their solution;
- to study the necessity of urban economy regulation of Yerevan, development trends and their modes of expression;

- to study the methods of urban economy regulation of Yerevan, the peculiarities and provisions of elaboration of development programs;
- to study the development disparities of separate administrative districts of Yerevan, to identify the possibility of their decrease;
- to study the necessity and possibility of strategy elaboration of Yerevan economy development.

The main scientific results of the Dissertation

On the basis of research and studies, the following innovations are existing in the author's work:

- a new definition of large urban economy has been given, it is defined as open socio-territorial system, the synergetic theory is considered as a scientific basis for the regulation of its development, when the planning takes into consideration the potential of self-organization of the large-scale urban economy, allows to use that potential by directing it to the improvement of the quality of life of the citizens.

- The innovative environment has been described and the necessity of submitting the corresponding indicators for innovation activities in economy development programs and science and innovative department in the Municipality has been justified;
- It has been justified that dynamics of the development of large cities largely predetermines the level of development of the regions and the entire country, the necessity of elaboration of strategy program of Yerevan urban economy have been identified, and the sequence of stages of the formation of a strategic plan has been elaborated.

The urban economy development problems of Yerevan have been considered in the complex of territorial policy, in the result of which the practical application of the elaborated approaches can provide great opportunities for the regular activity of Yerevan and the improvement of the welfare of the population.